



Հակոբ Պարոնյան

Մեղու

ՔՈՒԷԱՐԿՈՒԹԵԱՄԲ ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Տասնի չափ յետադիմական երեսփոխաններ շուկան դերձակի մը խանութը նստած՝ ազգային կենսական խնդրոց վրայ վիճաբանած ատեննին՝ պանդուխտ ազգային մը դիմացի խանութէն երեքական դուրուշի տասնըչորս կանգուն պասմայ առած ըլլալով եւ հաշիւն ալ չկրնալով ընել, այս երեսփոխանաց գտնուած խանութը կը մտնէ ու կը հարցնէ.

Երեք անգամ տասնըչորս քանի՞ կ'ընէ:

Քսանրութը, ըսաւ մէկը: Ոչ, երեսունըմէկ կ'ընէ, ըսաւ ուրիշ մը: Մխալ է, քսանըիննուկէս դուրուշ կ'ընէ, ըսաւ երրորդ մը. իննսունըինը դուրուշ կ'ընէ, պոռաց չորրորդ մը: Կարծեմ քսան դուրուշ տասը փարայ կ'ընէ, որոտաց անդիւն ուրիշ մը: Վերջապէս ամենն ալ մէյմէկ բան ըսելով, երբ տեսան թէ հակակարծիք են իրարու, մէջերնին մէկը առաջարկեց, որ քուէի դնեն ու մեծամասնութեամբ հասկնան քանի դուրուշ ընելը: Այս առաջարկութիւնը ընդունուելով մէջերնին մէկը ատենապետ եղաւ եւ ըսաւ.

Խնդիր մը կայ լուծուելու, կ'աղաչեմ որ կիրքը մէկդի ընէք եւ խղճիւ ձեր կարծիքը յայտնէք: Խնդիրը այն է, որ երեք անգամ տասնըչորսը քանի՞ կ'ընէ: Իմ կարծիքս այն է, թէ ութսունըմէկ կ'ընէ, ուստի ով որ իմ կարծիքս կ'ընդունի, թող ձեռքը վեր վերցնէ:

Ինը երեսփոխանք ձեռնին վեր վերցնելով միաձայն հաւանութեամբ որոշեցին, որ ասկեց վերջը երեք անգամ տասնըչորսը ութսունըմէկ պիտի ընէ:

Այս որոշումը ատենագրութեան մէջ կ'արձանագրուի: Պանդուխտ ազգայինը այս որոշումը առնելուն պէս շուտով կ'երթայ ութսունըմէկ դուրուշը կու տայ խանութպանին:

Խանութպանը շնորհակալութիւն կը յայտնէ:

Պանդուխտը խանը դարձած ատեն իր բարեկամներէն մէկուն կը հանդիպի, որն իր ձեռքի պասմայի կանգունը քանիի առած ըլլալը եւ քանի դուրուշ տուած ըլլալը հարցնելով տեղեկանալէն ետքը խաբուած ըլլալը կ'իմացունէ, բայց մեր պանդուխտը չուզելով համոզուիլ, երկուքը մէկէն յետադիմականաց գտնուած խանութը կ'երթան:

Աղաներ, երեք անգամ տասնըչորս քանի՞ կ'ընէ եղեր:

Մեր կարծիքը ըսինք ա իրեն:

Ինձի ալ ըսէք, քանի՞ կ'ընէ:

Չանըմ, իրեն ըսինք ա, մենք օրը հազարումէկ որոշում կու տանք, ամէնն ալ մտքերնիս կը մնա՞յ մի, մեր որոշումը իրեն հաղորդուած է:

Ինձի ալ չըսէ՞ք:

Կարապետ, սա ատենագրութիւնը բաց տէ կարդայ նայինք, երեք անգամ տասնըչորսին վրայօք ի՞նչ որոշում տուած է ժողովը:

Ութսունըմէկ գրուած է:

Էհ, անանկ է նէ՛ ութսունըմէկ է:

Ի՞նչպէս ութսունըմէկ կ'ընէ. իմ հաշուովս քառասունըերկու դուրուշ կ'ընէ կոր:

Երկար ըրիի ա, հիմա տասը հոգի սո՞ւտ պիտի ըսեն քեզի:

Սուտ չէ, բայց սխալած էք:

Կորսուեցէ՛ք սրկէ, ձեր միտքը ազգին մէջ երկպառակութիւն ձգել է
Սահմանադրութիւնը վտանգել է, մենք գիտենք, ասոնց ամէնը Խրիմեանին
գլխուն տակէն է:

Պանդուխտը կը շուարի կը մնայ, բայց իւր ընկերը համոզելով՝ մէկտեղ պասման
ծախողին կ'երթան ու երեսունըինը դուրուշը ետ կ'առնեն:

Յետադիմականք դեռ իրենց որոշումը ետ առած չեն:

ՎԱՐԺԱՊԵՏԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Անցեալ կիրակի վարժապետական ժողովը գումարուեր է. բայց այս անգամ
անոր անդամներէն մին խնդրոց կարգը փոխելով գրաբարի ու աշխարհաբարի
խնդրոյն վրայ վիճաբանելու տեղ գիրքերը այրելու խնդրոյն վրայ իս օ սեր է:

Քարաքաշեան Էֆենտիի հրատարակած դասագրքերը անկրօնութիւն կը
սորվեցնեն եղեր, ուստի գանոնք այրելու է եղեր:

Մեզի մնայ նէ՛ Քարաքաշեանն ալ այրելու է, որովհետեւ ողջ մնայ նէ՛ դարձեալ
անանկ գրքեր կը հրատարակէ:

Եւ արդարեւ քերականութեան որչափ դասագրքեր կան նէ՛ ամէնն ալ կրօնքի
դէմ են, որովհետեւ ուղիղ խօսողը՝ կրօնքի դէմ կը խօսի: Այս հաշուով
Փափագեան Ստեփան Էֆենտին ալ տապկելու է, վրան ալ քիչ մը լիսնոն սխմելով
Քարաքաշեանի քովը նետելու է:

Ասկից գատ թուաբանութեան դասագրքերն ալ անկրօնութիւն կը սորվեցնեն:
Երկու անգամ երկուքդ չորս կ'ընէ եղեր: Ի՞նչ փաստ ունինք ձեռքերնիս, որով
կարենանք հաստատել, թէ երկու անգամ երկուքդ չորս կ'ընէ: Յայտնի է, որ
ասիկա դիւաց մէկ գիտն է, եւ Աւետարանը չըսեր մեզ թէ՛ երկու անգամ երկուքդ
չորս կ'ընէ:

Թուաբաննե՛րն ալ այրելու է:

Հապա աշխարհագրութեան դասագրքերը ո՞ր թողունք:

Արեւը սանկ կը քալէ եղեր, երկիրը նանկ կը դառնայ եղեր, աշխարհս կլոր է եղեր, ասոր պէս խել մը սուտ բաներ գրուած են մէջը: Աշակերտը անգամ մը գանոնք կարդայ նէ՛ ալ անոր քովը կրօ՞նք կը մնայ:

Կրակը քիչ մը շատկեկ դնելու է տէ, աշխարհագրութեան դասագրքերն ալ այրելու է, տղաքները քիչ մը տաքնան:

Այս ամէնը այրելէն ետքը կարգը կու գայ դպրոցներուն: Մէկ կողմէն ալ ասոնք կը սկսինք այրել, մէյ մ'ալ կը նայիս, որ ազգը անզգալապէս լուսաւորուած կ'ըլլայ:

ԹԱՏՐՈՆ ԱԶԻԶԻԷ

Բարով ձեզ, Վարդովեան Էֆենտի, դերասանք ու դերասանուհիք, բարեւ ձեզ, յուշարարք, բարեւ ձեզ, դոնապանք եւ պահապանք, եւ վերջապէս բարեւ ձեզ, այն ամէն գոյական անուններ, որ թատրոնի մէջ կը գտնուիք:

Դերասանք եւ դերասանուհիք, արդեօք մտքերնէդ անցա՞ծ է երբեք, որ ես ալ ձեզի արուեստակից եմ:

Դուք ձեր անձին վրայ ուրիշ անձեր կը ներկայացնէք, ես ալ Մեղուին մէջ անձեր կը ներկայացնեմ. դուք երբեմն կը խնդացնէք եւ երբեմն ալ կը լացնէք, ես միշտ կը խնդացնեմ եւ երբեմն ալ կը լացնեմ. դուք մաս գոց կ'ընէք եւ դեր կը կատարէք, ես ալ մաս գոց կ'ընեմ, եւ երբեք ականջս յուշարարի չեմ ծախեր, ինչպէս որ ձենէ ոմանք կը ծախեն երբեմն. ուրիշները խնդացուցած ատենս ես չեմ խնդար, ինչպէս որ կը խնդան ձենէ ոմանք. եւ եթէ երբեմն Մեղուի մէջ իմ կողմէս քահքահ մը տեսնէք, գիտցէք, որ խնդացնելու կանոնները պահած ըլլալու համար ստիպուած եմ խնդալու. եւ եթէ երբեմն լա՛ն չհասկնաք, որ սիրտս ելած է եւ անոր համար կու լամ, ոճիս սաստկութի՛ն տալու համար է, որ կու լամ, ճարտասանական կանոններու համեմատ վարուելու համար միայն կու լամ:

Դեր կատարելու կարգը ինձի գալուն պէս վայրկեան մը չկորսնցուցած տեսարան կու գամ գործս լննցնելուս պէս տեսարանէն կը քաշուիմ: Դուք

շաբաթը երեք, չորս անգամ կը ներկայանաք, ես երկու անգամ կը ներկայանամ, դուք ձեր շրջանը լմնցնելնուդ պէս երկու երեք ամիս թատրոնը կը գոցէք եւ հանգիստ կ'ընէք, ես շրջանս չլրացուցած՝ անգիտութեամբ տպագրական օրինաց դէմ յօդուած մը կը հրատարակեմ, ես ալ իմ Թատրոնս կը գոցեմ:

Վարդովեա՛ն Էֆենտի, ալ այսչափ իրարու նմանելնէս վերջը չեմ գար ձեզի հարցնելու՝ թէ շատ հանդիսականներ ունի՞ք. իմ ընթերցողացս թիւն թատրոն եկողներուն թիւը կը գուշակեմ, ձեր վիճակը լաւ մը հասկնալու համար պէտք չունիմ ձեր գրպանները նայելու: Թշուատականնե՛ր, ձեռքս գրպանս խոթելուս պէս՝ ձեր վիճակը կը գուշակեմ եւ կը ցաւիմ:

Գրպաններնիս ալ երկուորեակներու պէս ասանկ իրարու նմանելէն ետքը, ի՞նչ պէտք ունիմ ձեզի գալ հարցնելու թէ՛ վհատա՞ծ էք: Ինքզինքի՛ս կը հարցնեմ եւ կը հասկնամ, որ վհատած չե՛մ. այն ատեն ցաւս ուրախութեա՛ն կը փոխուի, գրիչս կը նետեմ եւ մտքէս կ'ըսեմ.

Ես չե՛մ վհատած, անո՛նք ալ չեն վհատած:

ՄԵՂՈՒ ԱՌ ՎՍԵՄ. ՅԱԿՈՒ ԷՖԵՆՏԻ ԿԵՕՉԷԵԱՆ

Էֆենտի՛:

Ձեր վսեմութիւնը Մեղուէ բնաւ խայթուածք ընդունած չունի կարծեմ. որովհետեւ ձեր սենեակը մեղու մը մտնելուն պէս՝ սպասաւորք, խոհարարք, մատակարարք եւ սպասուհիք շուտով իրենց թաշկինակովը կը զինուին եւ հալածական կը վանեն խեղճ կենդանին, որպէսզի ձեր վսեմութիւնը չխայթէ:

Բայց այս անգամ այդ թաշկինակները ստակ չե՛ն ըներ, խայթելո՛ւ համար եկած եմ, պիտի խայթե՛մ, ճար չկայ. եւ աւելի ցաւալին այն է, որ լեզունի՛դ պիտի խայթեմ. խայթուածքս ականջդ պիտի անցնի եւ լեզուիդ վրայ պիտի մնայ:

Էֆենտի՛, դուք ստրված ըլլալով անոր ասոր ոսկիներ տալով բարեգործութիւններ ընել, կարծեր էք, որ ուզածնուդ իրաւունք տալով՝ բարեգործութիւն մը ըրած կ'ըլլաք:

Ձեր վսեմութիւնը սխալա՛ծ է հոս, ուստի սորվեցէք, որ մեծ տարբերութիւն կայ ոսկիի եւ իրաւունքի մէջտեղը. ոսկին` ոսկի շունեցողին կրնայ տրուիլ, բայց իրաւունքը` իրաւունք ունեցողին միայն տրուելու է:

Էֆենտի, մարգարեական հոգի՞ ունիք դուք, որ առանց երկու կողմը լսելու եւ դատելու կը վճռէք թէ` Մամուլ իրաւունք ունի:

Ձեզի շնորհ մը ընելու համար պահ մը կ'ընդունիմ, որ մարգարէ մ'էք, բայց դուք ալ ընդունեցէք, որ մարգարէներու մէջ բացառութիւն մ'էք. որովհետեւ ծառայ առանց մարգարէ ըլլալու կրնամ գուշակել, որ Մամուլ յանցաւոր է այս խնդրոյն մէջ: Մամուլին խիղճն ալ այսպէս կը վկայէ. դուք ձեր վկայութեամբ երիցս յանցաւոր էք, որովհետեւ թէ՛ Օրագիրը անպատուել կ'ուզէք եւ թէ՛ Մամուլին խղճին հակառակը կը խօսիք:

Կը գբօսնո՞ւք կոր, Էֆենտի. անոր ասոր պատիւը ձեր գուարճութեա՞ն կը գոհէք. ըսէք, Էֆենտի, շատ խնդացի՞ք, երբ Մամուլին մէջ կարդացիք, որ Օրագիր գիշերները շուներուն հետ կը պատկի, շուները Օրագրին ձեռքէն հացերը յափշտակեր են, Օրագրին տղաները տունը անօթի մնացեր են: Այո, խնդացիք եւ հիմա ալ կ'ըսէք, թէ Մամուլ իրաւունք ունի:

Գիտցէ՛ք, Էֆենտի, եթէ ես ըլլայի Օրագրին տեղ, կ'երդնում, որ յանուն արդարութեան, գրչիս ճարա՛կ կ'ընէի ձեր անունը լրագրական աշխարհի առջեւ:

Էֆենտի, տեղոյս անձկութիւնը կը ստիպէ զիս յաջորդ թիւերու թողուլ այս մասին միւս ըսելիքներս. ուստի հաճեցէք հիմակուհիմա ընդունիլ իմ խոնարհ խայթուածքս:

Ասանկ փափուկ պարագաներու մէջ ձեր բերանը աւելի լաւ կ'ընէ, եթէ համադամ կերակուրներ ուտելո՞ւ գբաղի, քան թէ խօսելու:

Շո՛ւտ ըրէք, սպասաւորք, քիչ մը կա՛ւ բերէք եւ Էֆենտիին լեզուին վրայ դրէք, որ խայթուածքին ուռուցքը անցնի...

ԱՌ ՎՍԵՄԱՓԱՅԼ ԱՆՈՒԱՆԱԿԻՑԴ ԻՄ ԿԵՕՉԷՇԱՆ ԷՖԵՆՏԻ

Որչափ բարեկամներ ունիք եղեր դուք, Էֆենտի: Շատերէն մեղադրուեցայ՝ ձեր վսեմութեան երկու վսեմութեան խօսք ընելուս համար. նոյնիսկ ինձ բարեկամ կարծածներս վրաս յարձակեցան եւ պնդեցին, որ գրածս յետս կոչեմ, ապա թէ ոչ, ըսին, նորին վսեմութիւնը կարող է թերթդ գոցել, գրեզ բանտը դնել եւ այլն: Սովորական ժպիտովս ճամբեցի գիրենք. ըսելով թէ՛ կամ դուք նորին վսեմութիւնը աղէկ չէք ճանչնար կոր, կամ իմ նուաստութիւնս: Աւելցուցի նաեւ թէ՛ նորին վսեմութիւնը մեզի պէս մարդոց պէտք ունի, մեզմէ սորվելիք ունի. մինչդեռ մեզի պէս մարդիկ նորին վսեմութեան պէտք չունին: Այս ճշմարտութիւններն ըսի իրենց, բայց անոնք դարձեալ չհամոզուեցան:

Ես միայն համոզուեցայ, որ դուք շատ բարեկամներ ունիք:

Արդ, ինչո՞ւ ես բարեկամ չունենամ եւ դուք ունենաք, Էֆենտի: Ի՞նչ է ասոր պատճառը:

Ասոր պատճառը դու եւ ես միայն գիտենք, եւ ես կ'ուզեմ, որ բոլոր աշխարհի գիտնայ, ուստի պէտք է ասոր վրայ երկարօրէն խօսիլ յաջորդ թուով:

Մնամ վսեմափայլ անուանակցիս

Վսեմափայլ անուանակիցդ

ԹԷ ԻՆՉՈՒ ԿԵՕՉԷԿԱՆ ԷՖԵՆՏԻ ՄԵՂՈՒԷՆ ԱԻԵԼԻ ԲԱՐԵԿԱՄ ՈՒՆԻ

Վսեմափայլ Էֆենտի:

Մոլութիւններ հարուածելու պաշտօնը վարող թերթ մը առաւել խղճի ատեանին ապաւինելով գրելու է՝ քան թէ քաղաքական ատեանին:

Քաղաքականութեան եւ բարոյականութեան մէջ անհուն տարբերութիւն կայ: Աս երկուքը հաշտ չեն եւ չպիտի կրնան ըլլալ: Քաղաքականութեան մէջ միշտ բարոյականութիւն չկայ. ինչպէս որ բարոյականութեան մէջ ալ բնաւ քաղաքականութիւն չկայ. եւ ասոր համար է, որ ինչ որ շատ անգամ կը դատապարտէ քաղաքականութիւնը՝ զայն կ'արդարացնէ բարոյականութիւնը:

Քաղաքական ատեանի մը առջեւ շատ անգամ լաւ փաստաբանող մը դիմացինին տկարութեամբքը դատը կը վաստկի. իսկ բարոյական ատեանի մը առջեւ յանցաւոր մը միշտ կը պատժուի՝ որչափ ալ տկար, որչափ ալ անգօր ըլլայ իւր դիմացինը:

Իմ նպատակիս հասնելու համար անպատճառ խղճի ատեանը ընդունելու եմ, եւ երբ հոս կ'արդարանամ, փոյթ չէ ինձ քաղաքական ատենի մը առջեւ դատապարտուիլս: Ես կ'ուզեմ որ ըսեն՝ «անմեղ էր եւ պատժուեցաւ», եւ չեմ ուզեր որ ըսեն՝ «պատժապարտ էր եւ արդարացաւ»:

Այս տողերով ինքզինքս ճանչցնելէն ետքը բուն խնդրոյն դառնամ:

Էֆենտի:

Ինչո՞ւ ինձմէ աւելի բարեկամներ ունիք դուք: Ո՞վ էք դուք: Ի՞նչ եմ ես: Ի՞նչ ունիք ինձմէ աւելի: Ի՞նչ ունիմ ձեզմէ պակաս:

Շնորհիւն ու անհասանելի կամօքն Աստուծոյ երկուքնիս ալ ասուն արարածներ ենք, որ կը խորհինք, կը խօսինք, կ'ուտենք, կը քնանանք, կ'արթնանք, կը ծնանինք եւ կը մեռնինք: Արդ, ինչ որ ունիս դուն՝ իբրեւ մարդկութեան նշան, ես ալ ունիմ. եւ թէ որ ասկէ դուրս բան մը ունիս՝ որուն շնորհիւր շատ բարեկամներ ունիս, ապա ուրեմն այն բարեկամներն քուկդ չեն, այլ անոր՝ զոր դուն ունիս եւ ես չունիմ (որովհետեւ բարեկամ չունիմ):

Ի՞նչ է ուրեմն այն որ ունիս՝ ես չունիմ:

Երկու տարեկան տղայ մ'իսկ գիտէ ասիկա ու կ'ըսէ.

Ոսկի՛ն:

Բայց ոսկին մարդկութեան նշան չէ՛:

Այն որ հոգի ունի՝ մա՛րդ է կրնանք ըսել. բայց չենք կրնար ըսել թէ՛ այն որ ոսկի ունի՝ մարդ է: Եթէ այս ըսելու կարող ըլլայինք. քսակներն ու քասաններն ալ մէյմէկ մարդ պիտի ըլլային:

Ուստի երբ ոսկին դուրս հանեն այս խնդրոյն մէջէն, բոլոր բարեկամներդ ալ դուրս կ'ելլեն եւ անոր կ'երթան, հետեւապէս ես ու դուն միայն կը մնանք իբրեւ մարդ՝ իրարու համապատիւ եւ համագօր:

Մեր խնդիրն ալ մարդկութեա՛ն խնդիր է եւ ո՛չ ոսկիի, ուստի հրամայեցէք խել մը խեղճերուն եւ տգէտներուն, որ շհայիոյեն ինձի եւ մտիկ ընեն:

Էֆենտի, դուք զՄամուլ պաշտպանելով, ըսիք Արեւելեան Մամուլին.

Անօթութենէ՛ մեռիր:

Ահա ա՛յս է իմ ցաւս:

Դուք զՄամուլ պաշտպանելով Մասիսին ըսիք.

Խե՛ղճ պիտի ապրիս:

Ահա ա՛յս է իմ վիշտս:

Դուք զՄամուլ պաշտպանելով Օրագրոյ ըսիք.

Հակառակ քու աշխատութեանցդ պէտք է որ խայտառակուի՛ս:

Ահա ա՛յս է իմ վախս:

Դուք զՄամուլ պաշտպանելով, գրական ասպարէզին վրայ սնունդ հայթայթելու համար անօթի փորանց ձեռագիր գրելով, իրիկունը չոր հաց ուտելով աշխատող խմբագրաց ըսիք.

Սատկեցէ՛ք դուք:

Ահա ա՛յս է իմ մահս:

Թող հայ լրագրութիւնը մեռնի՛, թող ան ու աս յանիրաւի խայտառակուի՛, ես պիտի գբօսն՛ւմ, ըսիք:

Ահա այս է ձե՛ր մահը:

Ահա ա՛յս է ճշմարտութիւնը:

Ալ ի՛նչ կ'ուզէք ըրէք Մեղուին, բայց սա գիտցէ՛ք, որ Մեղուն անանկ վիճակ մ'ունի, ուսկից ո՛ր վիճակին որ ենթարկուելու ըլլայ նե՛ առաջինէն ատելի աղէկ պիտի ըլլայ:

Ջգուշացէ՛ք, չարութիւն ըրած ատեննիդ բարութի՛ւն կ'ընէք եւ ես ձե՛նէ բարիք տեսնել չե՛մ ուզեր. միայն թէ ասանկ խնդրոց մէջ մէյ մ'ալ խառնուելու չըլլաք նե՛ լրագրութեան մեծ բարիք մը ըրած կ'ըլլաք:

Խնդրելով որ ընդունիք իմ յարգանքս,

Մնամ ձեր վսեմութեան ինչպէս որ արժան է մնալ:

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՔ ՄԵՂՈՒԻ

Ազնուականութիւնը ժառանգական չէ: Այն մարդը, որ առանց առաքինի ըլլալու կ'ըսէ, թէ հայրս ազնուական էր եւ ես ալ անոր համար ազնուական եմ, կը նմանի այն մարդուն, որ առանց բժշկութեան արհեստը սորվելու, կ'ըսէ, թէ ես բժիշկ եմ, որովհետեւ հայրս բժիշկ էր:

Մի՛ գարմանաք, երբ տեսնէք, որ տգէտները մտիկ չեն ըներ: Խրատը դեղ է, որ ականջով կ'ուտուի, կա՞յ տղայ մը, որ դիւրութեամբ դեղ առնէ:

Շատ անգամ դատողութիւնը կրնայ ճշմարտութիւն մը գտնելու օգնել, բայց չկրնար ճշմարտութիւն ըլլալ, ինչքան որ լապտեր մը կրնայ կորսուած ոսկի մը գտնելու օգնել, բայց չի կրնար ոսկի ըլլալ:

Աւելի կ'ուզեմ սատանայից օգնութեամբը իրաւո՛ւնքս վայելել, քան թէ հրեշտակա՛ց դասուն մէջ իրաւունքէս գրկուիլ:

Աւելի կը վախնամ, որ իմ ուրիշներուն վրայ ունեցած կարծիքս չփոխուի, քան թէ ուրիշներուն իմ վրայ ունեցած կարծիքը:

Շատերը կը զարմանան թէ՛ ինչո՞ւ մեր երեսփոխանութեան մէջ տգիտութիւնը մեծագոյն մաս կազմած է:

Այս զարմանքը խնդալս կը բերէ, մի՞թէ աղքատները միշտ մեծագոյն մաս չեն կազմեր:

Օրագրոյ դրամագլուխը սուտն է, ինչպէս որ մուրացկանի մը դրամագլուխն ալ բարենաղթութիւնն է:

Ասանկները դրամագլուխնին լնցած օրը կը սկսին միայն հարստանալ:

ԽՆԴԻՐՈՅ ՄԵՌԵԱԼՆ Ի ՏԵՍԼԵԱՆՆ ՄԵՂՈՒԻ

Ընթերցո՛ղ, ես ալ երազ կը տեսնեմ, եւ շիտակը հասկնալ կ'ուզեմ նէ՛ երկու անգամ կը տեսնեմ, մէկը արթնութեանս մէջ եւ մէկալը քնոյս մէջ. միայն սա պայմանաւ, որ արթնութեանս մէջ ուզած երազներս կը տեսնեմ, այսինքն գուարթ եւ մարդս երջանիկ ընող երազներ:

Երէկ իրիկուն անկողին մտնալուս պէս՝ դեռ չքնացած՝ սկսայ երազել: Բախտը անանկ բերաւ, որ այս երազիս մէջ, չիյտեմ ինչպէս եղաւ՝ միլիոնաւոր լիրաներ վաստկեցայ:

Նախ հացագործ Չաքար աղային ազգէն առնելիքը վճարեցի: Վերջը
Ներսէսեանը կանչեցի, հազար ոսկի ալ անոր տուի. ա՛ն սա ոսկիները, եւ
Իճատիէի դպրոցին վրայէն շնջէ քու անունդ եւ իմինս փորել տուր:

Այս գործն ալ լմնցունելէն ետքը, շիտակ Պերա ելայ: Փողոցները ցեխոտ ըլլալուն՝
չկրնալով մէկ կողմէն դիմացի կողմը անցնիլ, քոմիսիոնին ստակ տուի, որ Մեծ
փողոցին մէջ քանի մը կամուրջ շինէ, որպէսզի մէկը կարող ըլլայ մէկ խանութէն
անոր դիմացի խանութը անցնիլ:

Այս մեծագործութիւնն ընելէն ետքը, շիտակ գերեզմանատունը վազեցի, անոր
շուրջը իսկոյն անատիկ բերդերուս պէս բարձր պատ մը քաշեցի: Մէջը մտայ,
եկեղեցին ի հիմանէ նորոգելով՝ գմբէթաւոր եւ ընդարձակ եկեղեցի մը շինել տուի,
եկեղեցիին դռան վրան ալ այսպէս փորագրել տուի. «Շինեցաւ արդեամբ Մեղուի
ի թուականին տեսլեանն Մեղուի»:

Հայերը սա տեսնելնուն պէս՝ ինձի վազեցին. աշխարհիս մինչեւ վերջը ինձի
երախտապարտ մնալու երդում ըրին: Մէկը ձեռքս կը համբուրէր, անդիէն ուրիշ
մը ի ծունր իջած կը խնկարկէր զիս. ուրիշ մը ոտըններս պլլըւած՝ չէր թողոր որ
քալեմ, ամէնքը կու գային բալթոյիս բեշերը համբուրելու, անանկ որ, ճարս
հատաւ, բալթոս հանեցի եւ ծառէ մը կախեցի, որ հոն երթան համբուրեն,
ապսպրեցի ալ, որ համբուրելէն վերջը վրայի տիղմերն ֆրչայով մը սրբեն:

Հասարակութեան կողմէ տրուած այս երախտագիտական ցոյցերով արբշիո՞
սկսայ թռչիլ ու վեր բարձրանալ, այնչափ բարձրացայ, որ վերջապէս գետնին
տակը մտայ:

Քնացեր էի, եւ գէշ երագները՝ պանդուխտ հայու երագներն իսկ շատ տեսնելով՝
զիս մեռելոց մէջ տարած էին:

Ոսկրներու տօնավաճառին մէջ կը գտնուէի. չէի խօսիր, չէի տեսներ, մեռած էի:

Կմախքները զիս մեռեալ տեսնելնուն վրայ սրտմտած՝ ամէնը մէկէն վրաս
վազեցին եւ ըսին, զարթի՛ր, եւ ըսէ՛ մեզ, մեր հանգստութիւնը խռովելո՞ւ եկար
հոս, ըսէ՛, չէ նէ՛ հիմա զքեզ կը բզբա... ըսելնուն չմնաց, շուտով նոր հոգի զգեցայ,

չէ նէ՝ իրաւ պիտի բզբտէին:

Ո՛հ, ըսին ամէնքը միաբերան, հայրենիքէ արքայազն, լեռներու, ձորերու մէջ թափառեալ, անողոր թախտէն հալածեալ՝ թշուառ կեանք մը անցնելնէս յետոյ գերեզմանէ՞ն ալ պիտի արքայութիւնք: Ուրեմն գերեզմանին մէջ ալ չիք հանգստութիւն հայոց համար. բայց ո՛չ, ո՛չ, եթէ կենդանի հայերը մեռեալ են, մեռեալ հայերը դեռ կենդանի են.....

Մեռելոց համար լրագրական տեսչութիւն չըլլալուն ուրիշ շատ խօսքեր ալ ըրին, բայց մեր... մեր... մեր միտքը չմնաց:

Մեր միտքը չմնացած խօսքերը ըսելէն յետոյ՝ երբ բաժնուելու վրայ էին, մէկը եկաւ աստնց մէջ կայնեցաւ: Գրպանէն եօթը ութը քսակ ոսկի հանեց. չգիտեմ, որ իմ ոսկինէ՞րս գողցած էր, չէ նէ՝ ան ալ ինձի պէս երազ տեսած էր:

Ոսկիները ցոյց տալով՝ ըսաւ իրենց, թէ որ աստնք տալու ըլլամ նէ՝ դուրս կ'ելնէ՞ք: Մէկ մասը այո՛ ըսաւ, միւս մասը՝ ոչ, եւ ինչպէս որ ամէն կոհի այո էն եւ ոչ էն կ'ելնէ՝ մեծ պատերազմ ծագեցաւ իրենց մէջ:

Վախէս կը դողայի:

Պատերազմի միջոցին պատկառելի մարդ մը եկաւ դրօշ ի ձեռին. դրօշին վրայ գրուած էր՝ կրօնքը արծաթասէր չէ. ասոր վրայ կոհիը դադրեցաւ եւ ամէնքը միաբանեցան:

Մեռեալ հայոց միաբանութեանը վրայ զգացած ուրախութենէս արթնցայ եւ տեսայ, որ՝ ոչ Չաքար աղան ստակը առեր է, ոչ ալ Պերայի մէջ կամորջ շինուեր է. հելէ գերեզմանին շուրջը քաշած պատս եւ շինած եկեղեցիս չիյտեմ ինչպէս եղեր՝ անյայտ եղած են:

Թո՛ղ ըլլան, հարկաւ մօտ օրերս երազ մ'ալ կը տեսնեմ եւ առջի շինածէս ատիկ հաստատ կը շինեմ:

Մի՛ խնդար, հարուստներ, եթէ իմ երազներս ձեզի համար իրողութիւններ չեն, ձեր իրողութիւններն ինձի համար երազներ են. եւ ժամանակը եթէ

իրողութիւնները երազի կը դարձնէ՝ հարկաւ օր մ'ալ երազները իրականութեան կը դարձնէ:

ԽԱՅԹՈՒԱԾՔ

Մեղու այս օրերս ապահովութեան սենեակ մը բացած է, եւ կ'ապահովէ այն ամէն բաները, որք կորսուելու ենթակայ են:

Ուզողը կրնայ մեզ գտնել եւ ուզածը սիկուրթայ ընել:

Առ այժմ սիկուրթայի դրուածները հետեւեալներն են.

1. Պեկեանէֆենտիի փաստի կողովները:
2. Տէրոյենցպատուելիին համբար:
3. Մանգումէինականջները:
4. Ասիայինսկզբունքը:
5. Պտտիլշատ սիրող կնիկները:
6. Բաղնիքագողներուն ծխախոտի տուփը:
7. Պատրիարքարանգացող եւ դոնապանին պախշիշ չտուողներուն ոտքի ամանները:
8. Շոգենամանելով քնացողներուն պիլեթները:
9. Իզմիրցոց Խորէն եպիսկոպոսին վրայ ունեցած համարումը:
10. 10....տին առաջնորդութեանը տակ ապրող ժողովրդեան կրօնքը:
11. Մատնագել Մարթային փոքրիկ գլխարկը:
12. Մեղուինգուարթութիւնը:

Սիկուրթայ բռնել ուզողները չյոգնեցնելու համար մենք իրենց ոտքը պիտի երթանք. բայց որովհետեւ չենք կրնար մեր գրասենեակէն բաժնուիլ, որոշեցինք աղաչել Խրիստոսի Էֆենտիին, որ մեզի օմնիպիւս մը տայ՝ որպէսզի գրասենեակնիս օմնիպիւսի մէջ դնենք եւ այնպէս պտտինք:

Այս առթիւ պարտք կը համարինք Մեղուէն առնելիք ունեցող Էֆենտիներուն յայտնել, որ պարսպ տեղը չբարեհաճին մեր սենեակը գալ, որովհետեւ հոն

չպիտի կրնան գտնել մեզի:

Դատապարտեալ մը առջի օրը կ'ըսէր ինձ թէ՛ եթէ զոյգ մը ոտքի աման տայի իմ դատաւորիս, դատը կը վաստկէի:

Ահա ոտք մը՝ որ կաշառ կ'ուտէ, ահա ոտք մը՝ որ իրեն կօշիկ տուողին իրատունք կու տայ:

Սթափեցէ՛ք, ազգայինք:

Ով որ կարգուելու նպատակաւ աղջիկ մը տեսնել կ'ուզէ, պէտք է որ աղջիկը տունը տեսնէ եւ ոչ թէ փողոցը:

Որովհետեւ,

Աղջիկ մը՝ տան մէջ նիհար՝ իսկ փողոցը գէր է.

Տան մէջ ամբարտաւան՝ փողոցը հեզ ու խոնարհ է.

Տան մէջ թուխ՝ փողոցը ճերմակ է.

Տան մէջ տարիքն առած՝ փողոցը մատղաշ է.

Տան մէջ աղքատ՝ փողոցը հարուստ է.

Տան մէջ սաստանայ՝ փողոցը հրեշտակ է.

Տան մէջ ծոյլ՝ փողոցը ժիր է.

Տան մէջ թեթեւ՝ փողոցը ծանր է.

Տան մէջ վանողական՝ փողոցը քաշողական է.

Տան մէջ (մօտէն) տգեղ՝ փողոցը (հեռուանց) գեղեցիկ է:

Անոնք կրնան միայն փողոցին մէջ աղջկան մը համիլ եւ հետը ամուսնանալ՝ որոնք որ իրենց կնիկը միշտ հեռուէն տեսնել կ'ուզեն:

Մի՛ բարկանաք, օրիո՛րդ, ձեզի այսպէս հարուածելուս համար:

Եթէ ձեր ընթացքը այսպէս շարունակէք՝ պիտի սկսիմ ակնարկութիւններ ալ ընել:

Պուալո երգիծաբանի մը համար կ'ըսէ թէ՛ ոչ թէ միայն ծաղրած անձին անունը կու տար, այլ արուեստը, տեղն ու թաղն ալ կ'ըսէր, որ չըլլայ թէ սխալմամբ ուրիշ մը հասկցուի:

Ինչպէս որ հարուստ մը սիրտը նեղանալուն պէս սա նարտը բերէ՛ք, կ'ըսէ, ինչպէս որ տղայ մը ձանձրանալուն պէս խաղալիքը կ'ուզէ՛ ես ալ քիչ մը ձանձրանալուս պէս կ'ըսեմ.

Տրուի՛չ:

Ի՞նչ կ'ուզէք:

Սա Ասիան բեր:

Անցեալ շաբաթ օր Էտիրնէ երթալու համար ճամբայ ելնող շոգեկառքը ճամբուն գծէն դուրս ելեր եւ աւագին վրայ կայներ է:

Մեր քաղ. ժողովն ալ գծէն դուրս ելեր է, բայց առանց վիատելու դարձեալ կը քալէ. ինչէ՞ն է, որ այս շոգեկառքը կեցեր է:

Որովհետեւ շոգեկառքը գծին վրայէն քալելու համար շինուած է:

Անանկ է նէ՛ քաղ. ժողովն ալ գծէն դուրս քալելու համար շինուած է:

Չարմանալի չէ՞, որ Միսաքեան Էֆենտին քսանեւիինգ տարի Բարիզ կեցած ըլլայ ու պարապ դարձած ըլլայ:

Չարմանալի չէ, որովհետեւ քաղաքը չէ, որ գմարդ կը լուսաւորէ, այլ մարդն է, որ գքաղաք կը լուսաւորէ:

Ասիան լրագրաց արժանիքը քննադատելով ի՞նչ սկզբունք քարոզած կ'ըլլայ:

Մա սկզբունքը քարոզած կ'ըլլայ՝ թէ մարդ իր չգիտցած բանին վրայ կրնայ քննադատութիւն ընել:

Ասիային այդ յօդուածը կարդացած ատենդ ի՞նչ կու գայ միտքդ:

Միտքս կու գայ այն առակը՝ որուն բարոյականն է թէ՛ Աստուած, մի՛ մատներ գմեզ ի ձեռս յիմար դատողաց...

Օրագիր այս օրուան թերթին մէջ կինն Էրկրն է ն գատելու սկզբունքը դատապարտող անգուգական իմաստակներուն վրայ գրած յօդուածը այսպէս կը վերջացնէ.

«Աստուած մարդու խելքի պակասութիւն չտայ»:

Ահա մարդ մը, որ միշտ իրեն համար կ'աղօթէ...

Խօսիլ մի՛ տար գիս, ընթերցող, որովհետեւ բնութեան մէջ ալ այլանդակ բաներ տեսնել սկսայ:

Ի՞նչ հարկ կայ ականջ տալ այն մարդուն՝ որուն խօսելու պաշտօն տուեր է բնութիւնը. ի՞նչ հարկ կայ լեզու տալ այն մարդուն՝ որուն լսելու պաշտօն տուեր է բնութիւնը:

Գլուխը մարդու ջրամբարն է, որուն ծորակն է լեզուն: Ո՛վ բնութիւն, ինչո՞ւ ծորակ դրեր ես այդ ջրամբարին՝ որուն մէջ ջուր լեցուցած չես:

Այդ տեսակ մարդիկ կը նմանին աղբիւրի մը, որ ծորակ ունին եւ ջուր չունին: Այդ տեսակ մարդիկ ըստ իս գարդի համար ստեղծուած են, եւ կը նմանին հայկական այն բառերուն՝ որք գարդի համար միմիայն կը գործածուին պերճախօսութեան մէջ:

Ո՛վ Մանգումէ, եկո՛ւր իմ գուարճական պերճախօսութիւնս քիչ մը գարդարելու...

Բարեկա՛մ, յօդուած մը գրած եմ, եւ կ'ուզեմ Օրագրոյ խմբագրին տալ:

Գնա՛ տուր:

Ես չեմ ճանչնար զինքը, հետեւապէս իմ յօդուածս շնորհունիր, անոր մէկ բարեկամին հետ երթալու եմ, որ ընդունի: Կը ճանչնա՞ս անոր բարեկամներէն մէկը, որ կարենայ յօդուածս հրատարակել տալ:

Այո, կը ճանչնամ:

Ո՞վ է:

Ստակը:

Մանչուկ, սա լիսթան բեր, նայինք ի՞նչ կերակուր եփեր էք այսօր:

Հրամանեցէք:

(Կարդալէն ետքը): Աս լիսթան ալ մեր լրագիրներուն կը նմանի. Ամէն օր միեւնոյն բաները կը գրուին մէջը:

Երեսփոխանական ժողովին մէջ երբ ժողովրդեան կողմէ ձայն մը ելնէ՝
ատենապետը իսկոյն զանգակը հնչեցնելով կը յայտարարէ՝ թէ ժողովը պիտի
գոցեմ երբ ժողովուրդը հանդարտ չկենայ:

Ասիկա բարի սովորութիւն մ'է, բայց ինչո՞ւ համար մեծկակ զանգակ մ'ալ
ժողովրդեան ձեռքը չեն տար, որ ան ալ միեւնոյն յայտարարութիւնը ընէ, երբ
ժողովին մէջ երեսփոխանաց մէկուն կողմէ անկարգութիւն մը պատահի...

Գաղղիացիք ալ տղայ են, գործերնին թողած՝ դրօշակի խնդրով կը զբաղին:

Ամէնն ալ գրեթէ համաձայն են դրօշակ մը ունենալու մասին, բայց տարաձայն են
այդ դրօշակի գոյնին մասին: Ոմանք կարմիր կ'ուզեն եղեր, ոմանք ալ դեղին:

Ինչպէս որ կ'երեւի, խնդիրը ճաշակի վրայ է. մէկուն ճաշակին ճերմակը կու գայ,
միւսին ալ դեղինը: Իմին ալ ճաշակս հարցունես նէ՝ ես ալ կ'ըսեմ՝ թէ սեւին վրայ
ճերմակը աղէկ կը վայլէ, եւ կ'առաջարկեմ, որ դրօշակին մէկ կողմն ալ իմ
ըսածիս պէս ըլլայ:

Ո՛վ գաղղիացիք, այնչափ գոյներու ներկեցիք Գաղղիան, որ գոյն չմնաց, եւ հիմա
գոյն մը չէք կրնար գտնել ձեր դրօշակը ներկելու...

Հարուստները ինչո՞ւ համար դեռ վաստկիլ կ'ուզեն:

Օր մը Ռոնչիլտին հետ մրցելու համար:

Ռոնչիլտ որո՞ւ հետ մրցիլ կ'ուզէ:

Տիեզերքին հետ:

Չըսե՞ս, որ խենդ է:

Դու՞ն ըսիր:

Ստեփան Էֆենտի Փափագեանը ազգասէ՞ր է:

Էջմիածին տպուած օրացոյցը բեր, մէջը նայինք, ազգասէր է նե՛ հարկաւ մէջը գրուած է:

Ի՞նչ կ'ըսես, օրացոյցին մէջ անանկ բան կը գրուի՞:

Գրես նե՛ չը՞գրուիր: Մինչեւ հիմա մէկու մը ազգասէր ըլլալը անոր գործերէն կը հասկցուէր, ասկից վերջը օրացոյցէն պիտի հասկցուի:

Ատ ի՞նչ ըսել է:

Ահաւասիկ Էջմիածնայ օրացոյցին գրածը. հինգերորդ տարեդարձ օծման վեհ. Գէորգ ազգասէր կաթողիկոսին:

Ո՞ր ես, տէր Երեմիա, ո՞ր է սխալացոյցդ:

Ի՞նչ են ազգային երեսփոխանները:

Մէյմէկ դերասան:

Ի՞նչ կը ներկայացնեն:

Ազգը:

Փափագեան Էֆենտին ի՞նչ դեր կը կատարէ այս ներկայացման մէջ:

Չարագործի դերը:

Քննիչ յանձնաժողովի տեղեկագիրը անցեալ շաբաթ դէպի Խնդրոց կարգը ուղեւորուեցաւ:

Խնդրոց կարգը ի՞նչ է:

Լաբիրինթոս՝ ուսկից ներս մտնողը դուրս չկրնար ելնել:

Աղտեղութեամբ մածեալ եւ լրագիր անուան անարժան եղող Մամուլը իւր վերջին թիւերուն մէկուն մէջ Մեղուին համար անանկ խօսք մը կ'ընէ՝ գոր հոս բառ առ բառ դնելու կ'ամչնայինք՝ եթէ յիշեալ գարշահոտ թողթին արժէքը անգամ մ'ալ հասարակութեան ճանչցունել չուզէինք: Ահաւասիկ իր խօսքը.

Ծօ՛, սա Մեղուն արտաքնոցին ծակը նետեցէք:

Ոմանք սա կարդացած ըլլալով՝ կ'ըսեն.

Ի՛նչ մեծ անպատուօթին Մեղուին համար...

Իսկ մենք կ'ըսենք.

Ասիկա մեծ անպատուօթին չէ Մեղուին համար, այլ մեծ պատիւ է արտաքնոցին համար:

Արժանիքէն աւելի անձի մը կամ բանի մը տրուած պատիւն շողոքորթութիւն ըլլալով՝ Մամուլ այդ խօսքովը արտաքնոցը շողոքորթած կ'ըլլայ: Կը յորդորենք Մամուլը, որ մէյ մ'ալ ասանկ բան չընէ, որովհետեւ կրնայ ըլլալ, որ յիշեալ արտաքնոցը վաղը ելնէ գոռոզանայ եւ ինքզինքը բանի մը տեղ դնէ:

Մամուլյ արդի վիճակը մեր ըսածը լիովին կը հաստատէ:

Հինգշաբթի օրը ըստ լատինացոց Յիսուս ծնած ըլլալով՝ պորսան չբացուեցաւ:

Ո՛ր էր թէ Յիսուս ամէն օր ծնանէր՝ ի գոհութիւն բիրաւոր ընտանեաց:

Աւստրիոյ մէջ պատերազմի պատրաստութիւն ըլլալ կը կարծուի, որովհետեւ ընկերութիւն մը կազմուեր է հոն տատրակներուն նամակ բերել տանել սորվեցունելու համար:

Ըսել է թէ ամէն պատրաստութիւն տեսնուեր եւ գործը միայն տատրակներու մնացեր է, եւ թէ տատրակները այս արուեստը սորվելնուն պէս՝ կոիւր պիտի սկսի:

Լրագրի մը մէջ կարդացի, որ այս օրերս Եւրոպայի չգիտեմ ո՞ր կողմը չորս ոտքով տղայ մը ծներ է:

Ահաւասիկ տղայ մը՝ որ Պոլսոյ մէջ անվախ կրնայ քալել ուզած տեղէն, որովհետեւ եթէ դիպուածով թրամուէյը անոր մէկ ոտքը կտրէ նէ՛ անդին երեք հատ ալ ունի եւ անոնցմով կրնայ քալել:

Հայրի՛կ, ի՞նչ են հարուստները:

Մեծ գողեր են, տղաս, որ պզտիկները կը կողոպտեն:

Էյ, ասոնք գողցածնին որո՞ւ կու տան, որ պահէ:

Սնանկութեան:

Վաղը բոլոր դպրոցներուն մէջ Վարդանանց գօրավարաց առթիւ ճառեր կը կարդացուին: Այս ճառերը Վարդանանց քաջութեամբը կը սկսին ու ազգային դպրոցներուն խեղճ վիճակին վրայ ցաւելով կը վերջանան: Քանի մը տարիէ ի վեր կարդացուած ճառերուն վերջաբանը գրեթէ միշտ դպրոց է՝ ինչ որ ալ ըլլայ այդ ճառին վերջաբանը:

Ճառերը կարդացուելէն ետքը քաջն Վարդանայ ողբերգութիւն մը կը ներկայացուի: Ամէն դպրոց իրեն համար զատ ողբերգութիւն մը ունի, մէկուն մէջ կը նայիս, որ Վարդանը պատերազմին մէջ կը մեռնի, միւսին մէջ Տղմուտ գետին մէջ կը խեղդուի, մէկային մէջ պատերազմէ դառնալէն ետքը կը մեռնի, վերջապէս ամէն մարդ ուզածին պէս կը մեռցունէ քաջն Վարդանը. եկու տես, որ քաջն Վարդան այս ողբերգութեանց մէջ ալ կը ցցունէ իւր քաջութիւնը. զինքը մեռցնող ողբերգակներուն մեծագոյն մասն ալ ինքը կը մեռցունէ...

Արդ, վաղը քաջն Վարդան կը պատերազմի ոչ թէ պարսկաց դէմ, այլ մեր ողբերգումերու դէմ, եւ ես ապահով եմ, որ քաջն Վարդան յաղթանակը պիտի տանի:

Բարեկենդանը ի՞նչպէս կ'անցունէք կոր:

Այնչափ կը խմենք կոր, որ ինչպէս անցնիլը չենք կրնար կոր իմանալ:

Շատ խմելը վնասակար չէ՞:

Վնասակար է, բայց հաճոյքն ալ դժբախտաբար միշտ շատին մէջն է...
չափաւորութեան մէջ հաճո՞յք կայ:

Բայց ատով ապագան կը վնասուի, պէտք է որ ապագան ալ մտքէ չհանենք:

Այնչափ նեղ վիճակի մէջ եմ, որ ներկային վրայ խորհելէն ապագային վրայ մտմտալու ժամանակ չեմ ունենար կոր: Այսօրուայ հացը ճարելու կը նային կոր եւ վաղուան համար հոգ ընելու ատեն չեմ ունենար կոր:

Ահաւասիկ ակամայ աշակերտ Աւետարանի՝ որ կ'ըսէ. «վաղուանը մի հոգար»:

Եղբա՛յր, դուն գրագրութի՞ւն կ'ընես կոր եղեր:

Այո՛:

Դուն առաջ խոհարար էիր նէ:

Այո՛, խոհարար էի, բայց օր մը աղէկ կերակուր եփեր էի, տէրս հաւնեցաւ,
խոհարարութենէ հանեց՝ սենեակը տարաւ, ամսականս ատելցուց՝ գրագիր ըրաւ:

Կրնա՞ս կոր ընել:

Չեմ կրնար կոր, առջի օրը սխալմունք մը ըրի եւ կարծեմ ճամբայ պիտի տան...

Յանցանքը խեղճին չէ, այլ տիրոջը. կերակուրին հաւնեցաւ նէ՝ թո՛ղ խոհանոցի
պետ ընէր եւ ամսական ատելցնէր ու հիմա ալ չճամբէր...

Ասանկ անյարմար պաշտօնաբաշխութիւնները նոր չեն, հիներուն մէջ ալ կը
տեսնենք:

Նաբուգոդոնոսոր երազ մը կը տեսնէ. Դանիէլ այս երազը կը մեկնէ.

Նաբուգոդոնոսոր զինքը իրեն երկրորդը կը կարգէ:

Նաբուգոդոնոսորին տեղը ես ըլլայի նէ՝ Դանիէլը երազագէտ կ'անուանէի:

Հայրենիքին մէջ կը կարդանք, որ Պաթումի ազգայինք եկեղեցիի մը շինութեան
ձեռնարկած ըլլալով՝ տեղւոյն կառավարութիւնը եկեղեցին կոխեր է:

Կը կոխէ եա՛, տեղւոյն կառավարութենէն հրաման չառած՝ Աստուծոյ աղօթել
ի՞նչ ըսել պիտի ըլլայ...

Հայրի՛կ, թատրոնի մը մէջ կատակերգութիւն մը ներկայացուած ժամանակը հանդիսականք խնդան նէ՛ ի՞նչ ըսել է:

Դերասանները ծափահարել ըսել է:

Էյ, ողբերգութիւն մը ներկայացուած ժամանակը դերասանները խնդան նէ՛ ա՞ն ինչ ըսել է:

Մարդ Աստուծոյ, ամէն գիշեր գիտն՞ով պիտի գաս ասանկ:

Դուն ալ ամէն գիշեր սա խօսքը պիտի ընե՞ս:

Գիտով մի՛ գար, որ չըսեմ:

Մի՛ ըսեր, որ գիտով չգամ:

Տեսա՞ր, ընթերցո՞ղ, մարդը յանցանք չունի եղեր, բոլոր յանցանքը կնկանն է, որ կը բարկացնէ կոր իր Էրիկը եւ գիտով ըլլալուն պատճառ կ'ըլլայ կոր:

Ասոր սկզբնատրութիւնը ի՞նչպէս է արդեօք: Նախ Էրիկը գիտով գացեր է տէ՛ կնիկն ալ գիտն՞ով ըսեր է, չէ նէ՛ նախ կնիկը կեցած տեղը գիտով ըսեր է տէ՛ Էրիկն ալ բարկացեր ու խմել սկսեր է:

Կար կարելու մեքենայ տեսած ու լսած էինք, բայց աղօթելու մեքենայ ո՛չ տեսած, ո՛չ ալ լսած ունէինք. այս անգամ Աւետաբերին մէջ աս ալ տեսանք:

Չեմ յիշեր, ո՛ր ժողովուրդը ընելիք աղօթքը մեքենային ընել կու տայ եղեր: Եթէ ասիկա հնարատր է, ի՞նչ հ արկ կայ եկեղեցի երթալու, ամէնքնիս ալ այն մեքենաներէն մէյ մէկ հաս բերել տանք, եկեղեցիին մէջը դնենք, դռները գոցենք, թո՛ղ մեր տեղը անոնք աղօթեն՝ լմննայ երթայ:

Ասկից գատ՝ մեզի համար շարունակ աղօթողներ ըլլան նէ՝ մենք ալ հանդարտ
սրտով ուզածնու չափ կրնանք մեղք գործել, միայն թէ ձեռք մեքենաներէն
պակաս ընելու չէ, որ աղէկ եւ շուտ բանին:

Ամէն թատերասէր ազգայինք գիտեն, որ մեր հայերէն ողբերգութեանց մէջ
հրեշտակ մը եւ ոգի մը կայ:

Աս լմնցաւ:

Երէկ գիշեր երագիս մէջ կը տեսնէի, որ Աստուած մէկուն հոգին առնելու համար
հրեշտակ մը կ'ուզէր: Հրեշտակ չունինք, պատասխանեց հրեշտակապետը,
ամէնն ալ հայոց ողբերգութեանց մէջն են:

Արթնցայ եւ ըսի.

«Անշուշտ հայ ողբերգութեանց հոգին առնելու համար...»:

Մեր ողբերգակները՝ որպէսզի ըսուի թէ այս խաղին մէջ ոգի կայ, ոգի մը կը դնեն
կոր իրենց ողբերգութեանց մէջ: Ինչ օգուտ, որ հրեշտակ մ'ալ կը դնեն կոր եւ
հրեշտակը խաղին ոգին կ'առնէ կ'երթայ կոր...